

ՆՈՅԵՄԲԵՐ 2022

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	4
1.1.1. Ջրահեռացման համակարգի կառավարում	6
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	6
1.3. Ջրահեռացման համակարգ	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	8
1.5. Էներգահամակարգ	8
1.6. Մեքենա-մեխանիզմներ	9
2. Առևտրային տնօրինություն	10
2.1. Բաժանորդների տվյալներ	11
2.2. Հասույթ	11
2.3. Գանձում	12
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	13
2.5. Ջրաչափեր	14
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	15
3. Տեխնիկական տնօրինություն	16
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	17
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	18
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	20
3.4. Ջրատար համակարգի բարելավում	20
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	23
3.6. 1-85 թեժ գիծ	24
4. Լրատվական ծառայություն	25
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	28
5.1. Դասընթացներ/սեմինարներ	29
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	31
5.3. Քլորի տարողությունների ճնշափորձարկման, վկայագրման, ներկման և գնման աշխատանքներ	31
5.4. Արտադրական վտանգավոր օբյեկտների և վկայագրերի փորձաքննության աշխատանքներ	31
6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ	32
6.1. Համակարգչային ցանց	33
6.2. Բնութակտիվ համակարգ	33

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարադրոշմային և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

- «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից Նոր Նորք 8-րդ գանգված 23, 25 և 27 շենքերը սնող $d=200$ մմ քայքայված պողպատե խողովակը փոխարինվել է $d=110$ մմ $L=138$ գծ/մ պեթ խողովակներով: Իրականացվել է շենքերի մուտքագծերի փոխարինում $d=63$ մմ $L=115$ գծ/մ ընդհանուր երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով: Կառուցվել է թվով 3 դիտահոր և տեղադրվել է թվով 4 $d=50$ մմ փական: Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է բաժանորդների ջրամատակարարումը, բացառվել են հաճախակի կրկնվող վթարները:

- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի մի շարք հասցեներում ճնշման տատանումների հետևանքով հաճախակի էին վթարները և առկա էր ջրի կորուստ: «Քանաքեռ-Զեյթուն» տեղամասի աշխատակիցների կողմից Պարույր Սևակի փողոց 8/2 հասցեում գտնվող դիտահորում տեղադրվել է $d=200$ մմ ճնշման կարգավորիչ փական, $d=200$ մմ փական և $d=50$ մմ օդահեռ փական, ինչի արդյունքում բացառվել են ավելցուկային ճնշումները և խնայվել է մոտ $Q=8$ լ/վրկ ջրաքանակ:



Մյունիքի մարզ

- «Միսիան» տեղամասի կողմից Միսիան քաղաքի Սարալանջի փողոցում իրականացվել են նոր ջրագծի կառուցման աշխատանքներ: Նշված փողոցը սնող $d=325$ մմ պողպատե ջրագիծը կառուցվել էր 1980-ական թվականներին ստանդարտներին անհամապատասխան, գտնվում էր խիստ քայքայված, կոռոզիայի ենթարկված վիճակում և արդեն իսկ պիտանի չէր հետագա շահագործման համար, ինչի պատճառով հաճախակի առաջանում էին վթարներ, որոնք բերում էին ջրի պղտորվածության: Միսիան քաղաքի Սարալանջի փողոցում վերակառուցվել է $d=20-160$ մմ, $L=2446$ գծմ պեթ ջրագիծ, տեղադրվել է թվով 30 պոլիմերավազային դիտահոր, ապամոնտաժվել և նոր տեղադրված ջրաչափական դիտահորերում տեղադրվել է թվով 30 ($d=15$ և $d=20$ մմ) ջրաչափ, կառուցվել է թվով 4 բաժանարար հանգույց, որոնց վրա տեղադրվել է թվով 4 է/բ դիտահոր և թվով 4 դիտահորի ծածկ թուջե մտոցով $1.2*1.2*0.2$, բաժանարար հանգույցներում տեղադրվել են թվով 1 $d=150$ մմ, թվով 2 $d=80$ մմ փական և թվով 4 $d=50$ մմ գնդիկային փական: Կատարվել են խրամուղու հատակի հարթեցման աշխատանքներ: Կատարված աշխատանքների արդյունքում Միսիան քաղաքի Սարալանջի փողոցում բարելավվել է մատակարարվող խմելու ջրի որակը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարումը, տնտեսվել է մոտ 11լ/վրկ ջրաքանակ, կատարվել է ցանցի աշխատանքների ճիշտ կազմակերպում: Ընդհանուր առմամբ կառուցվել են $d=20$ մմ $L=300$ գծմ, $d=32$ մմ $L=140$ գծմ, $d=50$ մմ $L=15$ մ, $d=63$ մմ $L=1000$ գծմ, $d=90$ մմ $L=400$ մ, $d=160$ մմ $L=564$ մ պեթ ջրագծեր: Շահագործումից հանվել է $d=50-325$ մմ $L=3000$ գծմ վթարային վիճակում գտնվող ջրագիծ:



Արմավիրի մարզ

● «Էջմիածին» տեղամասի կողմից Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ջրամատակարարումն իրականացվում է Ամբերդ ձորի տարածքից $d=270$ մմ $L=700$ գծմ թուջե քայքայված ջրագծով, որն աշխատակիցների կողմից փոխարինվել է $d=250$ մմ $L=700$ գծմ պեթ և $d=160$ մմ $L=120$ գծմ ջրագծով:

Կատարված աշխատանքների արդյունքում կարգավորվել է Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ջրամատակարարումը, վերացվել են ջրակորուստները, կատարվել է ցանցի աշխատանքների ճիշտ գնահատում, տեղի է ունեցել հասույթի աճ: Շահագործումից հանվել է $L=970$ գծմ ջրագիծ:



Արարատի մարզ

● «Մասիս» տեղամաս. Մասիս Արարատյան 1/2 պոմպակայանից Նորաբացի ՕԿՁ-եր մղող $d=529$ մմ մետաղական ջրատարը կառուցվել է 2008 թվականին և գտնվում էր քայքայված վիճակում: Հաճախակի առաջացած վթարները բերում էին ջրի պղտորվածության և Նորաբացի ՕԿՁ-եր մղող ջրատարի նշված հատվածում վերջին 3 ամիսների ընթացքում առաջացել է ավելի քան 25 վթար: Աշխատակիցների կողմից իրականացվել են վերոնշյալ ջրագծի վերակառուցման աշխատանքներ ($d=426$ մմ $L=1470$ գծմ), շահագործումից հանվել է $d=529$ մմ $L=1470$ մ ջրագիծ:

Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է Նորաբաց, Դարակերտ, Դարբնիկ, Դաշտավան, Զորակ, Դուկասավան, Հայանիստ, Գետափնյա և Արբաթ բնակավայրերի մատակարարվող խմելու ջրի որակը, ապահովվել է մոտ 4424 բաժանորդի անխափան ջրամատակարարումը, տնտեսվել է մոտ 40լ/վրկ ջրաքանակ, կատարվել ցանցի աշխատանքների ճիշտ կազմակերպում, հասույթի աճ:



Արագածոտնի մարզ

● «Աշտարակ» տեղամաս. Աշտարակ քաղաքում ՊԿԱԾ շրջանակներում իրականացված շին. աշխատանքների ավարտից հետո, որոշ բաժանորդներ ջրագրկվել էին: Նշված բաժանորդների ջրամատակարարումը վերականգնելու համար աշխատակիցների կողմից Աշտարակ քաղաքի Մմբ. Շահազիզ ($d=200$ մմ $L=50$ գծմ), Ն.Սիսակյան ($d=20$ մմ $L=15$ գծմ), Գր.Նարեկացու ($d=40$ մմ $L=100$ գծմ, $d=25$ մմ $L=50$ գծմ և $d=20$ մմ $L=60$ գծմ), Հ.Բեկնազարյան ($d=50$ մմ $L=45$ գծմ) և Ն.Աշտարակեցու ($d=40$ մմ $L=30$ գծմ) փողոցներում կառուցվել են ջրագծեր:



Վայոց ձորի մարզ



● «Եղեգնաձոր» տեղամասի կողմից ք.Եղեգնաձոր, Եղեգիս համայնք, Շատին բնակավայրի Վանքի Ձոր կոչվող թաղամասում շարունակվել են ջրագծի կառուցման աշխատանքները ($d=63$ մմ $L=146$ գծմ):

1.1.1. ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

● Նորագյուղ թաղամաս 353 հասցեում ջարդված և խցանված d=150մմ թուջե կոյուղագծի L=24գծ/մ երկարությամբ հատվածը «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է նոր՝ d=200մմ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով, և ներկայումս կոյուղագիծը գործում է անխափան:

● «Արաբկիր» տեղամասի աշխատակիցների կողմից Բաղրամյան պող. 71 հասցեում կառուցվել է d=200մմ L=42գծ/մ կոյուղագիծ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով:

Նույնբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2735
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	68129
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	54226
Հոսակորուստի որոնում կորեյլատորով	մ	20757
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	4
Շահագործումից հանված ջրագիծ	մ	3373.5
Կառուցված ջրագիծ	մ	7605
Կառուցված կոյուղագիծ	մ	821.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	13
Փոխարինված փական	հատ	40
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	447
Մաքրված դիտահոր	հատ	707
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	9.8
Վերացված վթարներ		
Ջրամատակարարման ցանցում	հատ	1227
Ջրահեռացման ցանցում	հատ	1319
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Նույնբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	1,074	1,042	911

1.2. ԶՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է նույնբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքները	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	201	10	2	1	1	1	0	0	0	216
Փոխարինված	292	38	12	10	4	8	0	0	0	364
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	318	16	5	0	3	3	0	1	1	347
Ընդամենը	811	64	19	11	7	12	0	1	1	927

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 927 ջրաչափ: Կատարված աշխատանքների 87 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Նոյեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	0	255	42
2	Քանաքեռ-Զեյթուն	0	265	0
3	Մաշտոց	380	235	285
4	Շահումյան	0	201	23
5	Շիրակ	510	473	60
6	Արթիկ	0	100	24
7	Ապարան	0	38	0
8	Ալավերդի	0	30	0
9	Աշոցք	0	4	0
10	Բերդ	0	7	27
11	Իջևան	0	52	0
12	Լոռի	0	195	11
13	Նոյեմբերյան	0	24	0
14	Սպիտակ	0	24	0
15	Ստեփանավան	1550	24	0
16	Թալին	0	23	0
17	Տաշիր	0	8	0
18	Չարենցավան	0	68	12
19	Աբովյան	0	113	24
20	Հրազդան	0	98	120
21	Կենտրոն	450	247	24
22	Հյուսիս	90	270	0
23	Հարավ	0	388	6
24	Էրեբունի	0	166	0
25	Արմավիր	0	110	5.5
26	Արտաշատ	0	87	30
27	Էջմիածին	0	130	0
28	Աշտարակ	300	28	18
29	Արարատ	0	76	0
30	Մասիս	0	79	8
31	Գավառ	470	14	0
32	Սևան	700	60	7
33	Մարտունի	0	21	0
34	Վարդենիս	0	13	9
35	Ճամբարակ	32	13	0
36	Դիլիջան	0	25	72
37	Վայք	0	12	0
38	Եղեգնաձոր	30	10	0
39	Ջերմուկ	0	56	0
40	Սիսիան	0	46	0
41	Գորիս	0	34	6
42	Կապան	0	10	60
43	Մեղրի	0	24	0
	Ընդամենը	4512	4156	873.5

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Ջերմուկի կեղտաջրերի մաքրման կայանի մանր ճաղավանդակի ավտոմատ համակարգը խափանվել էր, որի պատճառով ճաղավանդակը անդադար աշխատում էր: Արդյունքում թերությունը վերացվեց և այժմ այն աշխատում է բնականոն ընթացքով: Նաև մանր ճաղավանդակների ռեդուկտորների մեջ յուղ ավելացվեց, որոնց մակարդակը բավականին իջել էր:

- Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանի ավտոմատ աշխատանքը խափանվել էր և գննության արդյունքում պարզ դարձավ, որ ջրի մակարդակի տվիչները փաթաթված էին աղբով: Արդյունքում այդ տվիչները դուրս բերվեցին հորից, մաքրվեցին և այժմ պոմպակայանն աշխատում է բնականոն ընթացքով: Փոխարինվեց նաև մեկ պոմպի էլեկտրական թողարկիչը:

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանի պոմպերից մեկը դադարել էր աշխատել, որի գննության արդյունքում պարզվել էր, որ պոմպի ներսից փաթույթներին միացվող լարերը կտրվել էին, որոնք գողվեցին: Արդյունքում պոմպակայանն աշխատում է անխափան:

- Գավառի կեղտաջրերի մաքրման կայանի օդամուղի ռոտորի ածխե թիթեղները մաշվել էին և այդ պատճառով օդ չէր մղվում դեպի սարքավորումներ: Արդյունքում դրանք փոխարինվեցին նորով և այժմ օդամուղն աշխատում է բնականոն ընթացքով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	69,244	28,8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	57,665	16,2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	154,591	5,4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	88,622	10,8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	103,111	9,9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	19,005	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	8,453	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	11,200	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	24,800	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	3,457	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 342 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 266 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ: Թվով 8 հասցեում հայտնաբերվել են ջրագծի վթարներ: Ուսումնասիրվել է նոր կառուցված թվով 9 պ/կ:

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Նոյեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար նոյեմբեր ամսվա ընթացքում թվով 1 մեքենայի շարժիչը մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:



Թվով 3 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամսանիֆներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Փոխարինվել են թվով 84 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, գտիչներ, արգելակման հեղուկ, անտիֆրիզ և քսայուղեր:

Թվով 20 անվադող նորոգվել է, փոխարինվել և հավասարակշռվել է:

Թվով 1 մեքենա-մեխանիզմների մարտկոց փոխարինվել է նորերով:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 3 մեքենայի վրա, փոխարինվել են հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 3 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 15 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել է և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 2 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուրի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:



Թվով 2 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Թվով 2 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 5 մեքենա-մեխանիզմի վրա:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.12.2022թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 590,606 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2022թ. նոյեմբեր ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	673,098	563,576	83,7
	Իրավաբանական անձ	31,163	27,030	86,7

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	738,341	601,741	81,5
	Իրավաբանական անձ	36,515	26,513	72,6

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 1186 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գուզահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցլության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Նոյեմբեր ամսվա ընթացքում ստուգաչափվել է 4832 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 11.2022
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2497	1648	289	4434
	Իրավաբանական անձ	249	128	21	398
	Ընդամենը	2746	1776	310	4832

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ նոյեմբեր ամսին փոխարինված 4832 ջրաչափերի մոտ 43 %-ը (կամ 2086 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 270,574 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2022թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Նոյեմբեր ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,552 մլն. դրամ (102 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում նախկինում կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում

կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը հաշվետու ամսին գերծ է փասցել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ՝ SMS-հաղորդագրությունները):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Նոյեմբեր ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 244 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 33.3 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.12.2022թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	9,844	2,234
Բնակիչ-բաժանորդներ	7,056	1,448
Իրավաբանական անձեր	2,788	786

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 341.7 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2022 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.12.2022թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	707,164	600,360	84.90	35,431	26,503	74.80
	Առանց ջրաչափի	31,177	1,381	4.55	1,084	10	0.92

Տվյալների բազայում 01.12.2022թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	ժամկետանց	%
Առևտրային	878,486	394,322	44.89	39,188	11,159	28.48

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 6512 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1684 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2419	1988	81.9
գ.Պոռշյան	1650	1125	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5955	1903	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Միսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 13153, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 13002, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 2922, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 3267, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2197, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3116 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 5622 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	523	309,582	55,119,909

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ




Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի նոյեմբեր ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է 96.7%, ինչը նույնն է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 107 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արգնի 1, Արգական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուր ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2022թ-ի, նոյեմբեր ամսին 2021 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 115 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 191 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 9963 կՎտ.ժ (1.17 %), այն դեպքում երբ նորակառույց շենքերի 15 պոմպակայան ավելացել է «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 15 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 7231 կՎտ.ժ: Իսկ առանց այս պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը կնվազեր 17194 կՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց խարբերդի պոմպակայանի)




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ուսումնասիրված հասցեներ

Հաշվետու ժամանակահատվածում 86 հասցեներում կատարվել է էլ. հաշվիչի ընթերցման, ցուցմունքների գույքագրման աշխատանքներ, նոր ընդունվող պոմպակայանների զննում համապատասխանելիության ստուգում: Կատարվել է փոխադարձ ակտերից էլ. էներգիայի ծախսերի դուրսբերում, մշակում և վերլուծություն, «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ փաստաթղթաշրջանառության կազմակերպում:

● Գյումրի քաղաքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 714 կՎտ.ժ-ով 2.4%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ



Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 26 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 11 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:


Թվով 358 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 247 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՋ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ: Թվով 3 հասցեում հայտնաբերվել են ջրագծի վթարներ:

Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում երեք հասցեում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով.

- ▶ Տիգրանյան 5/1 (Qz-16)
- ▶ Գ. Նոյեմի 16 (She-94)
- ▶ Արշակունյաց 52/1 (She-108)

Տեղադրված ընդհանուր 153 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 19,739 կՎտ.ժ կամ 8%:




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 8 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


● 2022 թվականի նոյեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 275 335 ԿՎտ/ժամ (37,91%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 63 829 ԿՎտ.ժ/ամիս կամ 3,75%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 173 426 ԿՎտ.ժ կամ 4,79 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են նոյեմբեր ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Ջրամատակարարման համակարգերի և համայնքների վերաբերյալ ԱՏՀ-ում ստեղծված տվյալների բազանների փափուրում, թարմացումներ և լրացումներ	Գյուղեր և քաղաքներ	8
Մարի Թաղի ջրագծերի վերաբերյալ թարմացում և ուղղում	թաղամաս	1
Երևանի սպասարկման տարածքի լոգերների գոտիների և նմուշառման կետերի պատրաստում	քաղաք	1
Համայնքների վերաբերյալ տեղեկատվությունը ԱՏՀ մուտքագրում և վերանայում	համայնքներ	9
ԱՏՀ-ում կատարվել են 500 ֆիզիկական և 98 իրավաբանական բաժանորդ կետերի ուղղումներ	բաժանորդ	598
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	228
Ջրագծի կառուցում	մետր	1141.7
Շահագործումից հանված ջրագիծ Երևանում	մետր	661
Տեղադրված կամ փոխարինված փականներ	հատ	73
Երևանի Մաշտոց, Ջեյթոն, Շահումյան տեղամասերի կողմից սպասարկվող ԱՏ համակարգում առկա պոմպերի տիպերի, տեղադիրքերի, քանակի և այլն ճշգրտում, ուղղում	քաղաք	1
Երևան քաղաքի սպասարկման տեղամասերի տարածքներում կոյուղատար ցանցում կատարված վթարավերականգնողական աշխատանքների մուտքագրում ԱՏՀ	մետր	245
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական կետերի ուղղում	կետ	2500
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական կետերի ուղղում	կետ	195
ԱՏՀ-ում Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2480
ԱՏՀ-ում Մարգալիս ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	9065
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	234
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	2305
ԱՏՀ-ում Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1785
ԱՏՀ-ում Մարգալիս կոյուղու երկարությունը	կմ	1807

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք նոյեմբեր ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը

Գառնի-Երևան ջրատար

Ջրատարի պլանային կանգառի ընթացքում ջրատարի վրա առկա վթարված ջրթող փականը (D=300մմ) ապամոնտաժվել է, ինչպես նաև ջրատարի վրա գոյություն ունեցող ապօրինի տեղադրված 2 հատ փականները (D=100մմ) ապամոնտաժվել են: Արդյունքում տնտեսվել է 5լ/վ ջրաքանակ:



Արտաշատան-Աշտարակ ջրատար

Ջրատարի շրջայցի ժամանակ հայտնաբերվել է 1 վթար և ապօրինի տեղադրված ծորակ: Տեղամասի կողմից այդ ապօրինությունը վերացվել է: Տնտեսվել է 2լ/վ ջրաքանակ:



Արզնի 2-Երևան ջրատար

Ջրատարի կանգառի ընթացքում վերացվել են վթարներ, որոնց արդյունքում ջրատարի կորուստը նվազել է 15լ/վ-ով:

Արին-Բերդ-Խարբերդ ջրատար

Ջրատարի վրա առկա էր արտահոսք՝ ≈ 20 լ/վ: Ջրատարի շրջայցի ընթացքում հայտնաբերվել է վթար, որը վերացվել է տեղամասի կողմից:



Ջերմանիս-Վեդի ջրատար

Ջրատարի ջրաքանակի կտրուկ նվազման պատճառով՝ ≈ 7 լ/վ կազմակերպվել է շրջայց դեպի այդ ջրատար: Արդյունքում հայտնաբերվել է վթարված հատված, որը և տեղում վերանորոգվել է:

Ընթացիկ ամսում նաև կատարվել են ջրաքանակների կարգավորման աշխատանքներ:

Գոտիավորման աշխատանքներ

Քաղաք Գյումրի


● Գյումրի քաղաքի 209 տնակային՝ նախկին ավտոշուկայի տարածքում տեղի ունեցած վթարը ուսումնասիրելիս պարզվել է, որ վթարված ջրագիծը նախկինում եղել է բանվորական ավանը սնուցող ջրագիծ, որը ներկա պահին չկա, իսկ ջրագծից սնուցվում է մեկ բաժանորդ: Ջրագիծը որոշվել է խցափակել, իսկ տվյալ բաժանորդին ջրամատակարարումը ապահովելու համար այն միացվել է տարածքով անցնող D=600մմ ջրագծին: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է D=80մմ, L=240մ պողպատե ջրագիծ, տնտեսվել է 1-2լ/վ ջրաքանակ:



● Գյումրի քաղաքի Օդանավակայան թաղամասում, KFW բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ջրամատակարարման ցանցի բարելավման ծրագրի շրջանակներում, Կոմիտաս և Թեհլերյան փողոցներում նոր ՊԷ ջրամատակարարման ցանցի շահագործումով, հին ցանցը շահագործումից հանվել է: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է D=200-100մմ, L=1050մ և D=50-32մմ L=984մ պողպատե ջրագծեր: Ըստ Գոտիավորման աշխատակիցների կատարած մոնիթորինգի և չափումների՝ պարզվել է, որ տնտեսվել է մոտ 10-15լ/վ ջրաքանակ:

Քաղաք Արուվյան

● Արուվյան քաղաքի Սևանի փողոցի վրա կատարած վթարաորոնողական աշխատանքների արդյունքում 1/1 և 4/1 շենքերի մոտ հայտնաբերվել են գաղտնի վթարներ՝ համապատասխանաբար Q1 = 1լ/վ, D=50 մմ պողպատե և Q2 = 10լ/վ, D=160մմ պե ջրագծերի վրա: Վթարները վերացնելուց հետո տնտեսվել է ընդհանուր 9լ/վ քանակությամբ ջուր և ջրամատակարարումը կարգավորվել է:



Քաղաք Հրազդան

● Հրազդան քաղաքի «Միկրո» պ/կ-ի սպասարկման տարածքում գտնվող շենքերում ճնշման կարգավորումների միջոցով տնտեսվել է մոտավորապես 3լ/վ քանակությամբ ջուր:

● Լիճք գյուղում վթարաորոնողական աշխատանքների արդյունքում 600մմ պողպատե ջրատարից միացված D=50մմ պողպատե ջրագծի վրա հայտնաբերվել է 2լ/վ քանակությամբ վթար:



Քաղաք Երևան



● «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Բագրատունյաց 17 շենքի բակում հայտնաբերվել է անհայտ ուղղությամբ գնացող D=100մմ պողպատե խողովակ, որը խցափակվել է ՇՏ աշխատակիցների կողմից: Արդյունքում տնտեսվել է Q = 1.7լ/վ ջրաքանակ:

● «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Արարատյան 2-րդ նրբանցք 18 տան դիմաց հայտնաբերվել է գաղտնի վթար D=32մմ պողպատե ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվել է Q=5լ/վ ջրաքանակ:



● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Ագաթանգեղոս 7 շենքի 2-րդ և 3-րդ մուտքերի միջև, շենքի տակ հայտնաբերվել է գաղտնի վթար D=80մմ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q=5լ/վ ջրաքանակ:

● «Մաշտոց» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Մերձավան գյուղի գորամասի մոտ հայտնաբերվել է անհայտ միացում, որը խցափակվել է ՇՏ կողմից: Արդյունքում տնտեսվել է Q=1.7լ/վ ջրաքանակ:




● «Ջեյթուն» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Առինջ գյուղի ոսկու շուկայի դիմաց հայտնաբերվել է 3 գաղտնի վթար D = 150մմ ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվել է Q = 8լ/վ ջրաքանակ:

3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Քաղաք Եղեգնաձորի Քառասուն աղբյուր քլորակայանում վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի խափանված վակուում կարգավորիչը հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● Քաղաք Արթիկ. Արթիկ քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի խցանված և շարքից դուրս եկած վակուում կարգավորիչը:

● Քաղաք Լոռիի Կարմիր Աղեգի քլորակայանում հեղուկ քլորի համակարգի վակուում կարգավորիչի շարքից դուրս եկած մանուֆետը փոխարինվել է նորով՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● Քաղաք Մարտունի Հոպոյի Վար քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած սարքավորումները նորոգվել և փոխարինվել են նորով:

● Քաղաք Արթիկի Մանթաշ քլորակայանում հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած վակուում կարգավորիչը փոխարինվել է նորով, ինչն էլ ապահովել է հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:




● Քաղաք Տաշիրի Նովոսելցովո քլորակայանում հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած դոզատորի գլխիկը փոխարինվել է՝ հեղուկ քլորի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:

● Քաղաք Երևան Ավան Բաբաջանյան 3/1 հասցեում հեղուկ քլորի նոր գնված 50կգ բալոնների համար կառուցվել է հենակ:



3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 38542 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 11581 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 9075 զանգ (78,4%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2506 (21,6%):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 26961 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 19319 զանգ (71,7%), իսկ մարզերինը՝ 7642 զանգ (28,3%):



185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիր

	Ստորաբաժանում	2021 նոյեմբեր	2022 նոյեմբեր	
Առևտրային	Ընդամենը	11060	11581	4.71%
	Երևան	8757	9075	3.63%
	Մարզեր	2303	2506	8.81%
Շահագործում	Շահագործում	22528	26961	19.68%
	Երևան	15900	19319	21.50%
	Արաբկիր	2333	3670	57.31%
	Քանաքեռ-Զեյթուն	1324	1459	10.20%
	Մաշտոց	1811	3412	88.40%
	Շահումյան	1717	1558	-9.26%
	Շենգավիթ	2469	3034	22.88%
	Կենտրոն	2228	3066	37.61%
	Հյուսիս/Ավան Նոր Նորք/	983	1319	34.18%
	Էրեբունի	3035	1801	-40.66%
	այդ թվում կոյուղու վթար	83	132	59.04%
	այդ թվում դիտահորի խցանում	4068	4422	8.70%
	ՄԱՐԶԵՐ	6628	7642	15.30%
	Հարավ	3278	3640	11.04%
	Հյուսիս	3350	4002	19.46%
	այդ թվում կոյուղու վթար	26	72	176.92%
	այդ թվում դիտահորի խցանում	2314	2812	21.52%
	Ընդամենը	33588	38542	14.75%

● 2021թ. նոյեմբերի համեմատ՝ 2022թ. նոյեմբեր ամսին 4,71 %-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակն ավելացել է 19,68 %-ով:

● 2021թ. նոյեմբերի համեմատ՝ 2022թ. նոյեմբերի ամսին 89 %-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, 28 %-ով՝ 5 բուսից ավել զանգերի քանակը և 255 %-ով ավելացել է հայտարարությունների լուսն ավտոմատ ծառայության միջոցով, ինչն էլ վկայում է այն մասին, որ բաժանորդները ջրանջատման մասին տեղեկատվությանը փորձում են ծանոթանալ լսելով տեղադրված պլանային և վթարային ջրանջատումների ձայնագրությունները և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն սովյալ տարածքում ջրանջատումների վերաբերյալ:

● 2021թ. նոյեմբերի համեմատ՝ 2022թ. նոյեմբեր ամսին 24,01 %-ով ավելացել են բամատակարարման բողոքները:



ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Նոյեմբերի կարևորագույն իրադարձությունը Վեոլիա սակագնային հայտի վերաբերյալ ՀՀ ՀՄԿՀ-ի ընդունած որոշումն էր, ըստ որի սակագինը բարձրացավ 8,4 դրամով, սակայն ՀՀ Կառավարության ֆինանսական աջակցության շնորհիվ այն սպառողների համար մնաց նախկինը:



Նշված հանձնաժողովի նոյեմբերի 29-ին կայացած նիստը թե ուղիղ էթեր հեռարձակվեց և թե լայնորեն քննարկվեց ՁԼՄ-ներում, սակայն առանձնահատուկ, առավել ևս սուր հարցադրույթներ ընկերությանը չեղան: Մի կողմից Վեոլիան օգոստոսից վարեց զուսպ տեղեկատվական քաղաքականություն հարցի առնչությամբ և ըստ էության բավարարվեց Հանրային հեռուստատվիքի կազմակերպած հավասարակշռված և իրավապես հիմնավորված բացատրությամբ, մյուսից՝ հանձնաժողովի նախագահ Գ.Բաղդասարյանը նիստից օրեր առաջ լիարժեք պարզաբանեց լրագրողներին խնդրի էությունը (այն այնուհետև տեղադրվեց facebook.com/veolia.armenia էջում), նշելով Վեոլիայի հայտի օրինականությունն ու ՀՀ Կառավարության պատրաստակամությունը՝ սուբսիդավորել սակագնի հնարավոր բարձրացումը: Այստեղ իր դրական դերը խաղաց նաև այն, որ Վեոլիան հենց Հանձնաժողովի նիստին, լրագրողներին և սպառողների շահերը պաշտպանող

կազմակերպությունների ներկայությամբ, ևս մեկ անգամ նշեց ընկերության ձեռքբերումները, որոնք որոշ առումներով գերազանցում են Վարձակալության պայմանագրով սահմանված ցուցանիշները:

Հաշվետու ամիսը նշվեց ATV հեռուստատվիքի հետ սկսված ակտիվ համագործակցությամբ: Նկարահանվեց ու ցուցադրվեց 5 ռեպորտաժ համակարգում տարվող կարևոր աշխատանքների վերաբերյալ: Դրանք վերաբերում են «Չախկալ» քլորակայանի կառուցմանը Փամբակի սարերում Սպիտակի ու հարակից բնակավայրերի համար, որը տասնամյակներով համարվում էր անլուծելի խնդիր, բաշխիչցանցի վերակառուցմանն ու զարգացմանը Երևանի մի քանի թաղամասերում ու Աշտարակում, որտեղ դա առավել քան հրատապ խնդիր էր, Նուռնուսում և Արգնիում տարվող ակտիվ շինարարությանը, որտեղ խողովակների մաշվածության պատճառով առկա է զգալի ջրակորուստ, Էջմիածնի ջրամատակարարման շարունակական բարելավմանը, Լաստիվերում Բջևանի համար նոր ջրային համակարգի կառուցմանը՝ գետընդունիչով, քլորակայանով ու ՋՄԿ-ով: Համակարգում տարվող աշխատանքների մասին մյուս տեսանյութերի հետ Հանրային կապերի բաժնի /ՀԿԲ/ կողմից այս ռեպորտաժների ցուցադրությունը ընկերության digital միջոցներում (facebook.com/veolia.armenia, Veolia.am պաշտոնական կայք, twitter.com/Veolia_AM և youtube Veolia Jur էջեր) անշուշտ որոշակիորեն նպաստեց հանրության շրջանում Վեոլիայի դրական կերպարի ձևավորմանը: Առավել ևս որ նոյեմբերն ընդհանրապես աչքի ընկավ համակարգում իրականացվող մի շարք խոշոր նախագծերով, որոնց արդյունքներն արդեն հաշված օրեր անց ակնառու դարձան սպառողներին:



ՀԿԲ-ի կողմից լուսաբանվեց օրինակ Գառնիի աղբյուրում և այնտեղից սկիզբ առնող ջրատարների վրա կատարվեց մի քանի անուն աշխատանք: Այսպես, կառուցվեց աղբյուրի քլորակայանը սնող նոր 1000մ տրամագծով խողովակաշար, քանի որ հարկ էր Երևանին

ու Արարատի մարզին տրվող ջրի քլորացումը դարձնել ավելի հուսալի ու մարդկանց առողջության համար անվտանգ: Նույն Գառնիից դեպի Նոր Կյուրիին, Խարբերդի ամառանոցային թաղամաս և «Մասիս» ՕԿՁ կառուցվեց նոր, ավելի մեծ թողունակության ջրագիծ: Եվս մեկ նոր ջրագիծ կառուցվեց այստեղից մինչև «Խարբերդ» ՕԿՁ ամռանը Մասիսի տարածաշրջանի բնակավայրերի ջրի աճող պահանջարկը բավարարելու համար: Շատ կարոր ծրագիր իրականացվեց նաև Վեդիի ջրամատակարարման համար, որը նույնպես ՀԿԲ-ն ներկայացրեց

հանրությանը: Խոսքը օգոստոսից «Ջերմանիս» բարձր լեռնային աղբյուրում տարվող աշխատանքների ավարտի մասին է: «Փախչող ջրերի» հավաքման շնորհիվ ի վերջո ջրի արտադրությունն այնտեղ ավելացավ վայրկյանում մոտ 16 լիտրով, ինչը թույլ տվեց այս քաղաքում ապահովել նվազագույնը 6 ժամյա ջրամատակարարում:

Հաջորդ իրականացված կարևոր ծրագիրը, որի վրա հանրության ուշադրությունը հրավիրեց ՀԿԲ, «Արարատյան» պոմպակայանից դեպի «Նորաբաց» ՕԿՋ ձգվող մայրուղային ջրատարի 1550 մետրանոց վթարային հատվածի փոխարինման աշխատանքներն են: 131 մլն դրամ արժեքով աշխատանքներն իրականացվեցին մի քանի ամսվա ընթացքում և հանգեցրին ջրատարից սնվող 14 գյուղերի ու Մասիս քաղաքի ջրամատակարարման բարելավմանը:



Սպառողներին ներկայացվեց նաև Արագածոտնի մարզի Ագարակ գյուղը շրջանցող 550 մետրանոց ջրատարի, ինչպես նաև նոր ջրագծերի կառուցումը Կապանում, Իջևանում, Աքորում, Բաղրամյանում, Այգեկում, կոյուղագծերինը Կապանում ու Հրագղանում, պոմպերի տեղադրումը Բաղաբերդում ու Գյուլագարակում, և շատ այլ արդեն տեղական նշանակության աշխատանքներ:

Ցանկանալով ցույց տալ բաժանորդներին, որ Վեոլիայի համակարգում ջրի տեխնիկական կորուստների դեմ պայքարը կրում է շարունակական բնույթ, ՀԿԲ-ն հրապարակեց պաշտոնական հաղորդագրություն այն մասին, որ ընթացիկ տարում Վեոլիայի Տեխնիկական տնօրինության Հոսակորուստների հայտնաբերման և գոտիավորման վարչության կողմից սպասարկվող 380 բնակավայրերի բաշխիչ ցանցում և մայրուղային ջրատարների վրա ժամանակակից ակուստիկ սարքերի միջոցով հայտնաբերվել է 641 «գաղտնի վթար», որոնք վերացվել են շահագործման տեղամասերի կողմից, այսպիսով կանխելով ջրի կորուստը:

Բնականաբար, Վեոլիայի արդյունավետ գործունեությունը որոշակիորեն արդյունք է նաև Վարձակալության պայմանագրի հաջող կատարմամբ շահագրգիռ կազմակերպությունների մշտական ուշադրության, օգնության ու համագործակցության: Դրանցից մեկը Ֆրանսիայի դեսպանությունն է Հայաստանում, որը մեզանում գործող այլ Ֆրանսիական կազմակերպությունների թվում ուշադրության կենտրոնում է պահում նաև Վեոլիա Ջուր ՓԲԸ:

Դրա հերթական դրսևորումն է ընկերության տնօրեն Մարիաննա Շահինյանի հանդիպումն է դեսպան Անն Լյույոյի հետ: Ինչպես նշվում է դեսպանության մամուլի հաղորդագրության մեջ, հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Հայաստանում Վեոլիայի զարգացման ռազմավարությանը, ինչպես նաև ջրամատակարարումը բարելավելու նպատակով ընկերության կողմից իրականացվող տարբեր ծրագրերին:

Նոյեմբերին հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, facebook.com/veolia.armenia-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. Veolia.am պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և youtube Veolia Jur էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*

5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

● Հինք ընդունելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի Գլխավոր տնօրենի կողմից հաստատված «Անձնակազմի աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության, մասնագիտական և ադմինիստրատիվ հմտությունների բարելավման մասով ուսուցման, վերապատրաստման և (կամ) որակավորման դասընթաց կազմակերպելու, անցկացնելու, որակավորման վկայականներ տրամադրելու մասին կարգի» պահանջները, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» Բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի պահանջները, բաժնի կողմից կազմակերպվեց և իրականացվեց «1000կգ և ավել բեռնաբարձությամբ ամբարձիչ սարքավորման տեխնիկայես սարքին վիճակի և անվտանգ շահագործման պատասխանատու անձի որակավորման», «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» և Բարձր ռիսկերի կառավարման ստանդարտ «Երթևեկությունը աշխատավայրում» առցանց/հեռավար դասընթաց և գիտելիքների ստուգում Ընկերության Տեխնիկական տնօրինության ՋՍԳՍ ծառայության թվով 2 աշխատողի համար:





● Բաժինը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 23/11/2006թ. N 1933-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոնների» տեխնիկական կանոնակարգի և «ՀՍՏ 312-2009_Կազմակերպությունների էլեկտրատեխնիկական և էլեկտրատեխնոլոգիական անձնակազմերին էլեկտրաանվտանգության որակավորման խմբեր շնորհելու պայմաններ» ստանդարտի պահանջներով, կազմակերպեց «Էներգետիկայի գիտահետազոտական ՓԲԸ» հավաստարմագրված փորձագետների կողմից Ընկերության Էլտնտեսությունները շահագործող, սպասարկող պատասխանատու անձի որակավորման դասընթաց թվով 3 աշխատակցի համար:


● ՈԱԱ բաժինը (Որակավորման հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ, 247-րդ հոդվածի 3-րդ մասի և 254-րդ հոդվածի, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ հաստատված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջներով և էլեկտրոլ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջներից, Ընկերության Տեխնիկական Տնօրինության թվով 34 քլորի օպերատորի համար կազմակերպեց և իրականացրեց 3 մոդուլից բաղկացած մասնագիտական որակավորման հեռավար/առցանց դասընթաց/գիտելիքների ստուգում.

▶ «Քլորակայանների շահագործմանը, քլորի պահեստավորմանը և տեղափոխմանը ներկայացվող անվտանգության պահանջներ» որակավորման դասընթաց/գիտելիքների ստուգում,

▶ «Երթևեկությունն աշխատավայրում» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջները թեմայով դասընթաց,

▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» դասընթաց:






● Հինք ընդունելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների պահանջները, Ընկերության Հյուսիս Շահագործման տնօրինության թվով 32 աշխատողի համար Բաժնի կողմից կազմակերպվեց և իրականացվեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները.

- ▶ Վեոլիա Գրուպի «Փոստրակների և խրամուղիների մշակման աշխատանքներ» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքներում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ բարձրության վրա» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները թեմաներով:



2021-2022թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ




5.2 ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայքեր Ընկերության թվով 66 քլորակայանում, 13 պոմպակայանում, 6 ՋՄԿ-ում, 6 ԿՄԿ-ում և 3 վարչական շենքում: Ստուգայքերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսուճասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 5 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:

2022 թ. իրականացված անվտանգության ստուգայքների քանակներն ըստ օբյեկտների



5.3. ՔՆՏՐՈՒ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՆՇԱՓՈՐՁԱՐԿՄԱՆ, ՎԿԱՅԱԳՐՄԱՆ, ՆԵՐԿՄԱՆ ԵՎ ԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Ընկերությունը, ելնելով համակարգերում շահագործվող ճնշման տակ աշխատող անոթների՝ քլորի բալոնների, կոնտեյներների անվտանգ շահագործման անհրաժեշտությունից, հաշվետու ամսում գնել և շահագործման է հանձնել թվով 14 քլորի կոնտեյներ և թվով 50 քլորի բալոն:

5.4. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Բաժինը, ելնելով համակարգերում տեխնածին վթարների կանխարգելմանը և բացառմանը, ինչպես նաև մարդու կյանքի, առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում, «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊԸ-ի փորձագետների հետ համատեղ, պլան-ժամանակացույցի համապատասխան իրականացրել է թվով 98 ԱՎՕ-ի (քլորակայան, ամբարձիչ սարքավորում, մանիպուլյատոր հարմարանքով կահավորված հեղուկ քլոր տեղափոխող ավտոմեքենա) տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



6.1. Համակարգչային ցանց

Նոյեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Տրամադրվել են նոր համակարգիչներ և հին համակարգիչները նույնպես վերաբաշխվել են:
- Կատարվել են մոնիտորինգային աշխատանքներ՝ անվտանգության տեսահսկման համակարգերի ուղղությամբ:
- Մի շարք աշխատանքներ են իրականացվել՝ անսարք սարքավորումները փոխարինելու նոր սարքավորումներով, ինչպես նաև տեղադրվել են նորերը:
- Գրուպի կիբերանվտանգության դեպարտամենտի հետ համատեղ մշակվել է նոր կիբերանվտանգությանն ուղղված քաղաքականություն կապված Արդյունաբերական կիբերանվտանգությունը բարձրացնելու նպատակով:
- Ներդրվել են մի շարք կիբերանվտանգության համակարգեր:
- Ներդրվել է նոր ներքին հեռախոսների կառավարման համակարգ, որը թույլ կտա ավելի արդյունավետ կառավարել և ընդլայնել ներքին համարների տրամադրման շառավիղը:
- Իրականացվել է Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացում:
- Իրականացվել է Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացում:
- Սպասարկվել է մոտավորապես 500-530 զանգ SS բաժնի աջակցության համարով:
- Գրանցվել, սպասարկվել և փակվել է մոտ 600 SS աջակցության տոմս:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Սեպտեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Մի շարք հաշվետվություններ են պատրաստվել և տրամադրվել ՀԾԿՀ և Ջրային Կոմիտե, ինչպես նաև տարբեր ներքին և արտաքին աուդիտորներին:
- Ինտերակտիվ համակարգում կատարվել են փոփոխություններ, կապված Առևտրային սնօրինության և այլ ստորաբաժանումների գործընթացը ավելի ավտոմատիզացնելու հետ:
- Ակտեր
- Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Խախտման արձանագրություններ			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. ի/մ	մլն. դրամ
Յյուսիս	12	4.77	0.88
Էրեբունի	15	47.82	8.38
Շենգավիթ	20	2.71	0.47
Կենտրոն	9	6.74	1.35
Արաբկիր	15	7.77	1.53
Մաշտոց	31	51.53	9.02
Շահումյան	31	10.84	1.92
Եղվարդ	60	14.63	2.52
Քանաքեռ-Զեյթուն	6	3.13	0.55
ԱՎԲ	77	44.01	8.17
Լոռի	18	10.04	1.94
Շիրակ	28	9.39	1.74
Արթիկ	3	0.64	0.12
Արարատ	17	1.63	0.29
Աբովյան	54	38.03	6.61
Հրազդան	4	0.81	0.16
Ալավերդի	3	1.29	0.23
Ապարան	1	0.52	0.09
Արտաշատ	9	1.03	0.19
Բերդ	1	0.24	0.05
Գավառ	2	0.47	0.08
Եղեգնաձոր	1	0.26	0.05
Էջմիածին	7	2.82	0.51
Իջևակ	5	0.71	0.13
Կապան	3	1.29	0.23
Մասիս	6	2.79	0.52
Սևան	2	1.46	0.28
Վայք	3	3.35	0.58
Աշտարակ	32	13.70	2.37
Զարենցավան	3	0.73	0.14
Սիսիան	3	1.55	0.31
Սպիտակ	3	0.26	0.05
Ստեփանավան	4	3.09	0.53
Տաշիր	1	0.52	0.09
Ընդամենը	489	290.55	52.06

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ)
 Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Անսարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Յյուսիս	16	4.60	19	3.01
Էրեբունի	12	5.63	14	0.26
Շենգավիթ	9	6.09	23	0.67
Կենտրոն	19	99.72	23	2.82
Արաբկիր	9	3.39	23	0.43
Մաշտոց	19	13.88	56	0.88
Շահումյան	24	20.52	50	0.24
Եղվարդ		-	1	0.11
Քանաքեռ-Զեյթուն	8	2.31	20	3.52
Լոռի	22	16.00	75	8.06
Շիրակ	13	6.76	33	0.20
Արթիկ	7	2.64	29	0.22
Արարատ	3	0.34	34	6.73
Աբովյան	1	0.10	24	0.21
Յրազդան	24	5.61	31	1.54
Ալավերդի	2	1.03	157	0.55
Աշոցք	1	1.55	3	0.01
Ապարան		-	6	0.02
Արտաշատ	18	3.27	47	0.51
Բերդ	2	0.20	12	0.08
Գավառ	4	3.46	25	0.95
Գորիս	8	5.93	29	0.17
Դիլիջան	6	3.02	9	0.04
Էջմիածին	8	3.89	6	0.12
Թալին	1	0.71	2	0.32
Իջևան	5	0.41	15	1.10
Կապան	3	1.03	19	0.27
Ճամբարակ		-	1	0.00
Մասիս	20	11.02	19	0.30
Մարտունի	1	0.17	3	0.01
Մեղրի	7	2.32	8	1.43
Նոյեմբերյան	1	0.52	1	0.00
Արմավիր	2	1.03	6	0.06
Զեյթուն		-	2	0.53
Սևան	2	0.88	2	0.02
Աշտարակ	8	1.84	33	0.65
Զարենցավան	6	1.62	9	0.03
Սիսիան	2	1.74	25	0.26
Սպիտակ	2	0.19	6	0.16
Ստեփանավան	4	1.55	13	0.11
Տաշիր		-	1	0.26
Ընդամենը	299	234.9749	914	36.85992



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am